ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 22203; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> փետրվարի 2014 թվականի N 22 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 183 (ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԵՔ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 183 (հարյուր ութսուներեք) անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, սոցիալապես անապահով քաղաքացիների դիմումների համաձայն ավագանու <<Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի>> կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող ժամանակավոր տնակներում բնակվող թվով 183 (հարյուր ութսուներեք) անձանց տրամադրել դրամական օգնություն՝ 1.830.000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի,
2. Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին՝ հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան_ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2014թ. փետրվարի 11
ք.Գյումրի